

ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 22-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ 1972—1973 ուսումնական տարվա հոգևոր ճեմարանի շրջանավարտ չորս սարկավագների ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը՝ բարձր նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Հանդիսությանը ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունը, ուսանողությունը և մասնավոր հրավիրյալներ:

Բացման խոսքով հանդես է գալիս տ. Աղան վրդ. Բալիոզյանը:

Ավարտաճառերը քննող հանձնաժողովը, որի կազմում էին հոգևոր ճեմարանի դասախոսներ Արթուն Հատիտյանը, Սամվել Անթոսյանը, Պարգև Շահբազյանը և Գրիգոր Գյուլյանը, նախապես հանգամանորեն ընթերցել էին ավարտաճառերը և տեսչությանը ներկայացրել իրենց գրավոր կարծիքը քննվող աշխատանքների վերաբերյալ՝ ընդգծելով յուրաքանչյուր աշխատանքի առավելություններն ու թերությունները:

Հունիսի 22-ին, հանդիսության ժամանակ, հանդես են գալիս շրջանավարտները՝ իրենց դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանությամբ: Յուրաքանչյուր շրջանավարտ սարկավագ համառոտակի ներկայացնում է իր աշխատությունը, խոսում իր օգտագործած աղբյուրների մասին և ապա պատասխանում քննիչ հանձնաժողովի և ներկաներից ոմանց հարցերին:

Ընդմիջումից հետո քննող հանձնաժողովը արձանագրում է հետևյալ գնահատականները՝ շրջանավարտ սարկավագների ավարտաճառերի մասին.

Ռոբերտ սրկ. Նազարյան. ավարտաճառի թեման՝ «Ազգային սահմանադրություն». «լավ».

Ավետիք սրկ. Արաբաջյան. ավարտաճառի թեման՝ «Ռուս եկեղեցու պատմությունն ու դավանությունը». «գերազանց».

Վրեժ սրկ. Նաջարյան. ավարտաճառի թեման՝ «Մխիթար Գոշի «Մեկնութիւն Երեմիայի» աշխատությունը». «լավ».

Սամվել սրկ. Պետրոսյան. ավարտաճառի թեման՝ «Մովսես Երզնկացու «Մեկնութիւն պատարագի» աշխատությունը». «հույժ գերազանց»:

Այնուհետև նոր կյանք մտնող Մայր Աթոռի սարկավագներին Իր հայրական պատգամն ու օրհնությունն է տալիս Վեհափառ Հայրապետը, արտահայտում Իր սրտի գոհունակությունն ու ուրախությունը, հոգևոր ճեմարանի խոստումնալից այս հնձի առիթով, հանձնելով շրջանավարտներին հոգևոր ճեմարանն ավարտելու մասին վկայականները և նվերներ բոլոր ներկաների ցնծագին ծափողջույնների ներքո:

Սույն հանդիսությունը փակվում է խրմբովին երգված «Հայր մեր»-ով և հայրապետական «Պահպանիչ»-ով: